ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«___» _____ 2020 թվական N_____-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2000 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 255 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում առաքվող կամ տրամադրվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման (հաշվառման) և վաճառվող արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) մասին» N 255 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՂ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ, ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԵՐԻ (ՀԱՍՈՒՅԹԻ) ԳՐԱՆՑՄԱՆ (ՀԱՇՎԱՌՄԱՆ) ՄԱՍԻՆ»,

2) որոշման 1-ին կետն ուժը կորցրած ճանաչել,

3) որոշման 2-րդ, 2.1-ին, 4-րդ կետերում և որոշման 2-րդ կետով հաստատված կարգում «Լեռնային Ղարաբաղի» բառերը, բացառությամբ ««Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերի, փոխարինել «Արցախի» բառերով,

4) որոշման 2.1-ին կետից հանել «և էկոնոմիկայի» բառերը,

5) որոշման 3-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունը՝ համաձայնեցնելով ԼՂՀ ֆինանսների նախարարության հետ» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությունը» բառերով,

6) որոշման 2-րդ կետով հաստատված կարգի՝

ա. 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Գրանցման գրքերում գրանցման (հաշվառման) ենթակա են ձեռք բերված (սեփական արտադրության արտադրանքի դեպքում՝ վաճառքի իրականացման վայրում՝ (կետերում) ընդունված) բոլոր ապրանքները ստանալուց (ընդունելուց) անմիջապես հետո՝ մինչև վաճառքի հանելը, բայց ոչ ուշ քան մինչև ապրանքները ստանալու օրվա ավարտը՝ անկախ առևտրի իրականացման ձևից (մեծածախ կամ մանրածախ), բացառությամբ սույն կետի երկրորդ պարբերությամբ սահմանված դեպքի:

Արցախի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքները գրանցման գրքերում ենթակա են գրանցման (հաշվառման) ապրանքները ստանալուց (ընդունելուց) անմիջապես հետո՝ մինչև վաճառքի հանելը, բայց ոչ ուշ, քան ապրանքները ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում, եթե հարկային մարմնի ներկայացուցչի կողմից սահմանված կարգով կազմվել է ապրանքանյութական արժեքների հաշվառման ամփոփագիր:

Տնտեսավարող սուբյեկտներն աշխատանքի ընթացքում (վաճառք իրականացնելիս) պարտավոր են գրանցման գիրքը պահել առևտրի (անմիջական վաճառքի) իրականացման վայրում (կետում):»,

բ. Ձև 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ **Բ. ՍԱՀԱԿՅԱՆ**

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2020 թվականի _____ _____-ի N_____-Ն որոշման

«Ձև 2

ՀԱՅՏ
ՎԱՃԱՌՎՈՂ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ, ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԵՐԻ (ՀԱՍՈՒՅԹԻ)
ԳՐԱՆՑՄԱՆ ԳՐՔԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆՈՒՄ ՀԱՇՎԱՌՄԱՆ

Փաստաթղթի հերթական համարը ***ԱՀ ֆինանսների նախարարության***

N_____ _____
(լրացվում է հարկային մարմնի կողմից)

հարկ վճարողներին սպասարկող
ստորաբաժանման պետ

_____

_____
(հարկ վճարողի անունը, ազգանունը կամ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ))

_____
(հարկ վճարողի բնակության կամ գտնվելու վայրը)

Խնդրում եմ հաշվառել վաճառվող արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման գիրքը (գրքերը).

1. _____ էլեկտրոնային ☐ թղթային ☐
(առևտրի (անմիջական վաճառքի) իրականացման վայրը (կետը),
_____ անհրաժեշտ է նշել
գրքի վարման ձևը)

2. _____ էլեկտրոնային ☐ թղթային ☐
_____ անհրաժեշտ է նշել

3. _____ էլեկտրոնային ☐ թղթային ☐
_____ անհրաժեշտ է նշել

Նշված առևտրի (անմիջական վաճառքի) իրականացման վայրի (կետի) համար նախկինում գիրք՝

1. չեմ հաշվառել.
(ընդգծել)

2. հաշվառել եմ հետևյալ առևտրի (անմիջական վաճառքի) իրականացման վայրի (կետի) համար:

էլեկտրոնային թղթային

1. _____ ☐ ☐

(առևտրի (անմիջական վաճառքի) իրականացման վայրը (կետը),

_____ անհրաժեշտ է նշել

գրքի վարման ձևը)

էլեկտրոնային թղթային

2. _____ ☐ ☐

_____ անհրաժեշտ է նշել

էլեկտրոնային թղթային

3. _____ ☐ ☐

_____ անհրաժեշտ է նշել

Հաշվառումը վարվում է Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից սահմանված չափանիշներին բավարարող հետևյալ համակարգչային ծրագրով*

_____

_____

Կից ներկայացնում եմ՝

1. նշված հասցեի առկայությունը հիմնավորող իրավասու պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրված տեղեկանքը.

2. հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրից օգտվելու համապատասխան փաստաթղթի պատճենը*:

Հարկ վճարողի պաշտոնատար
կամ լիազորված անձ _____ _____

(ստորագրությունը) (պաշտոնը, անունը, ազգանունը)

Կ.Տ.

_____ _____ 20 թ.

_____

* Լրացվում (ներկայացվում) է միայն էլեկտրոնային գիրք հաշվառելու դեպքում:»:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԼԱԶԱՐՅԱՆ